

## Նեղի Նալբանդյան

ԵՊՀ հայցորդ

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆՔԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՂԱԴՐԻՉ

*«Թարգմանություն» եզրույթն ամեննին չի ենթադրում մեկ բառի թարգմանություն, այլ բառակապակցությունների և արտահայտությունների ճիշտ վերարտադրում: Կարևոր է նաև աշխատանքային լեզուների տարբեր կառույցների իմացությունը: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել հենքային գիտելիքի առանձնահատկությունները. դրանց ուսուցմանը, մի կողմից, մեծապես նպաստում է թարգմանությունը, մյուս կողմից՝ նման գիտելիքները ապահովում են թարգմանության համարժեքությունը:*

***Հիմնարարներ.** հենքային գիտելիք, միջմշակութային հաղորդակցություն, օտարալեզու մշակույթ, հաղորդակցական գործընթաց, համարժեք, արդյունավետ շփում:*

Օտար լեզուներ և միջմշակութային հաղորդակցություն ուսուցանելու սերտ կապն ու կախվածությունն այնպես ակնհայտ են, որ մանրամասն պարզաբանելու կարիք գրեթե չկա: Օտար լեզվի ամեն մի դաս մշակութային խաչմերուկ է. միջմշակութային հաղորդակցության գործընթաց, քանի որ յուրաքանչյուր օտար բառ արտացոլում է օտար աշխարհ և օտար մշակույթ:

Հիրավի, բառերի և քերականական կանոնների իմացությունը բավարար հենք չեն լեզուն որպես հաղորդակցության միջոց օգտագործելու համար: Անհրաժեշտ է որքան հնարավոր է ավելի խորը տիրապետել այն գիտելիքին, որ վերաբերում է ուսուցանվող լեզվի երկրին:

Այս համատեքստում կարող ենք փաստել, որ ներկայում օտարալեզու կրթության բովանդակության հիմնական նպատակն է ուսուցանել օտարալեզու մշակույթը: Օտար լեզուն մշակույթի անքակտելի բաղադրիչն է, նրա կրողն ու արտահայտման միջոցը:

Ուստի սովորողների մեջ անհրաժեշտ է ձևավորել այն կայուն գուգորդված կապը, որ գոյություն ունի օտարալեզու բառերի և մայրենի լեզվում նրանց համարժեքների միջև: Ինչպես ցույց են տվել մասնագիտական հետազոտությունները, նման կապերի ձևավորումը պետք է արտահայտվի, այսպես կոչված, կարծրատիպերի թարգմանությամբ, ինչպես նաև բառերի ուսուցմամբ՝ դրանք թարգմանելով մայրենի լեզվով և մայրենի լեզվից: Իրական տեղեկատվական հաղորդակցության պայմաններում սովորողը մշտապես կանգնում է բառային դժվարությունների առջև, քանի որ նա ներկայացվող արտահայտությունների բովանդակությունն ըմբռնում է իր մայրենի լեզվով: Օտարալեզու արտահայտությունների արագ և ճշգրիտ թարգմանությունը պայմանավորված է նրանով, թե որքան արագ են մտաբերվում օտարալեզու համարժեքները, որն էլ հնարավոր է միայն վերջինների ձևավորման և ամրապնդման որոշակի մակարդակում:

Հարկ է առանձնացնել հայ հետազոտողների (Բ.Կ. Կարապետյան, Մ.Օ. Գյոդակյան) այն տեսակետը, ըստ որի օտար լեզվի ուսուցման գործընթացում առանցքային է մայրենի և օտար լեզվի համապատասխան երևույթների համեմատումը:

«Հաղորդակցական» վերելքի ժամանակահատվածում ուսուցման գործընթացում չի խրախուսվում թարգմանությունը: Այն համարվում է անցյալի մասունք, հին օրերի քերականական-թարգմանական մեթոդի խորհրդանիշ:

Սակայն այս տեսակետը հերքում են որոշ հետազոտողներ (Մ.Բ. Լյախովիցկի, Ի.Ա. Զիմնյայա, Լ.Ս. Վիգոտսկի, Ռ. Միլրոդ), քանի որ շատ սովորողների համար անհրաժեշտություն է որոշ բառերի և կառույցների իմաստային համարժեքներն իմանալ մայրենի լեզվով: Նրանք այս դեպքում նաև հնարավորություն ունեն համեմատել նմանությունները և տարբերությունները:

Հետևաբար, ուղիղ մեթոդի կիրառումը, որն ենթադրում է ուսուցման գործընթացում երկլեզվության մթնոլորտի ստեղծում, մայրենի լեզվի կիրառման բացառում, չի տալիս իր ցանկալի արդյունքը:

Մեթոդական նոր մոտեցումների տեսանկյունից՝ թարգմանության կիրառումը խոսքային գործունեության ուսուցման հիմք չէ: Միաժամանակ շատ մեթոդիստներ թույլատրում են թարգմանության կիրառումը ուսուցման գործընթացում (Բ.Վ. Բելյան, Ա.Ա. Լեոնտև, Վ.Գ. Կոստոմարով, Օ.Դ. Միտրոֆանովա, Բ.Ա. Գլուխով, Ա.Ն. Շչուկին և այլք):

Ա.Ն. Շչուկինը դիտարկում է այն հիմնախնդիրները, որոնք կարող են լուծում ստանալ թարգմանության միջոցով.

1. համադրել առկա գիտելիքները՝ հիմք ընդունելով գործառական մի շարք առանձնահատկություններ,
2. հաղթահարել մայրենի լեզվի ազդեցության խոչընդոտները, որոնք հաճախ առաջանում են առավել բարդ նյութերի վերարտադրման ժամանակ,
3. ուշադրությունը կենտրոնացնել շարահյուսական որոշակի դրույթների վրա՝ իմաստային կառուցվածք, նախադասության մեջ բառերի ճիշտ դասավորություն և այլն:

Միջին դպրոցում ևս կարևորվում է թարգմանության դերը, քանի որ մայրենի լեզվով թարգմանությունն առավել արդյունավետ է հատկապես բարդ կառույցների ուսուցման ժամանակ: Այս պարագայում, բառերի կամ բառակապակցությունների իմաստներն այլ բառերով արտահայտելու համար տասը ընդհանուր ծախսելու փոխարեն ուսուցիչը կարող է նպատակին հասնել՝ կիրառելով պարզ թարգմանություն վայրկյանների ընթացքում: Օրինակ՝ միանգամայն բարդ է բացատրել այնպիսի կարևոր առօրյա արտահայտությունների իմաստներն, ինչպիսին են “on the safe side, out of sorts, black sheep, break the ice, etc.”: Մինչդեռ այս դեպքում մայրենի լեզուն ակտիվ բառապաշար ստեղծելու անփոխարինելի միջոց է:

Այս համատեքստում «թարգմանություն» եզրույթի իմաստի տակ ոչ թե պետք է միայն հասկանալ մի լեզվից մյուսը բառերի թարգմանություն, այլ նաև մտքերի և հասկացությունների վերարտադրում:

Վերը նշվածը վերաբերում է նաև **հենքային գիտելիքներին**: Իսկ ի՞նչ է հենքային գիտելիքը:

«Հենքային գիտելիք» եզրույթն անգլերենից վերցված «background knowledge»-ի հայերեն թարգմանությունն է, որը տարբեր հետազոտողների (Վ. Գուդիկունստ և Ի. Կիմ, Ռ. Սկոլլոն և Վոնգ Սկոլլոն և ուրիշներ) աշխատություններում բնորոշվում է որպես շրջապատող աշխարհի մասին գիտելիքներ:

Կ.Կ. Սթիվենսը հենքային գիտելիքը բնորոշել է որպես. «այն, ինչ մարդը գիտի տվյալ թեմայի մասին»:

Այնինչ Հ.Ջ.Ա. Բիմանսի և Փ.Ռ. Սայմոնսի կարծիքով՝ «հենքային գիտելիքն այն գիտելիքի պաշարն է, որ սովորողները տիրապետում են որևէ կրթական միջավայրում և դա նպաստում է նոր գիտելիքներ ձեռք բերելուն»:

Դիտարկենք նաև Բ. Հասլեթի տեսակետը, ով հենքային գիտելիքը դասակարգում է չորս տեսակի, որոնք իրենց ազդեցությունն են թողնում հաղորդակցական գործընթացի վրա.

- «ընդհանուր գիտելիքներ» կամ պարզապես աշխարհընկալում,
- մշակութային գիտելիքներ, որոնք առնչվում են սեփական մշակութային արժեքների հետ,

- հաղորդակցական իրավիճակում փոխգործակցության կանոնների վերաբերյալ գիտելիքներ,
- լեզվաբանական գիտելիքներ (լեզվական իրազեկություն):

Հետազոտողների սահմանումները բառացիորեն կարող են տարբերվել, մինչդեռ նրանց բնութագրերը հանգեցնում են միևնույն հիմնական իմաստին, ըստ որի հենքային գիտելիքն իրողությունների և մշակույթի վերաբերյալ գիտելիքն է, որին տիրապետում են խոսողները (գրողները) և լսողները (ընթերցողները):

Մ.Վ. Լյախովիցկին մեծ տեղ է հատկացնում այն գիտություններին, որոնք նպաստում են հենքային գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք են տվյալ երկրի գրականությունը, աշխարհագրությունը, պատմությունը, իսկ կիրենետիկան նա դասում է հաղորդակցության և տեղեկատվության տեսությունների շարքում:

Լ.Ի. Գրիշանսան այն կարծիքին է, որ օտար լեզու ուսումնասիրելիս անհրաժեշտ է ոչ միայն հիշել անձանոթ բառերը, այլև իմանալ դրանց բառային-դարձվածաբանական համատեղելիությունը, քանի որ ամեն մի բառ ազգային է և ոչ համամարդկային:

Սա ընդունելի տեսակետ է, քանի որ ինչպես փորձն է ցույց տվել, տվյալ մշակույթին միայն տեսականորեն ծանոթանալը բավարար չէ, որպեսզի նրա ներկայացուցիչների միջև տեղի ունենա հաղորդակցություն առանց կոնֆլիկտի: Հետևապես, այլ մշակույթ կրողների հետ արդյունա-

վետ շփումն անհնար է առանց գործնական գիտելիքների:

Հետազոտության համար վերցնենք ամենահասարակ բառերը, որոնք ցույց են տալիս առարկաներ և երևույթներ և գոյություն ունեն բոլոր ազգությունների ու մշակույթների մեջ:

Հայերենում *տուն* բառը յուրաքանչյուր հասցե նշելիս պարտադիր բաղադրիչ է: Անգլերենում նմանատիպ համատեքստում այն ընդհանրապես համարժեք չունի, և թարգմանելիս, ի տարբերություն հայերենի, համարը ուղղակի գրում ենք փողոցի անվանումից առաջ և ոչ թե հետո: *Տունը* ավելի լայն իմաստ և գործածություն ունի, քան *house*-ը, և նրանց միջև եղած իմաստաբանական ծավալի տարբերությունն առաջ է բերում զգալի դժվարություններ օտար լեզուներ ուսումնասիրելու և դասավանդելու գործընթացում: Մինչդեռ, եթե նույնիսկ քննարկենք այն խոսքային իրավիճակները, որտեղ *տունն* իմաստային առումով համընկնում է, որն էլ նշանակում է, որ պետք է թարգմանվի ըստ համարժեքների, անհրաժեշտ է հաշվի առնել մշակույթների միջև եղած տարբերությունը՝ ոչ թե իրական առարկաներով, այլ նրանց մասին ունեցած պատկերացումների մակարդակով, որն էլ թույլ կտա տվյալ նախադասությունը հասկանալ և համապատասխանաբար ճիշտ թարգմանել: Օրինակ՝ *That morning she had a headache and stayed upstairs.* Այս նախադասությունը բառացիորեն կթարգմանվի հետևյալ կերպ. *Այն առավոտ նա գլխացավ ուներ և մնաց վերևում:* Սակայն ճիշտ թարգմանությունը այլ է. *Այն*

*առավոտ նրա գլուխը ցավում էր, և նա չեկավ նախաճաշելու:* Իրողությունն այն է, որ անգլիական ավանդական տներին վերին հարկում միայն ննջարաններն են, իսկ առաջին հարկում՝ հյուրասենյակը, ճաշասենյակը և խոհանոցը: Այդ իսկ պատճառով, upstairs-ը (վերևը, որ բարձրանում են աստիճանով) և downstairs-ը (ներքևը, որ իջնում են աստիճանով) ենթադրում են ապրելակերպը և տան կառուցվածքը, այսինքն՝ այն, ինչ արտահայտում է *house* բառը, որն էլ զգալիորեն տարբերվում է հայերեն *տուն* բառ-հասկացությունից: Ե՛վ մեկը, և՛ մյուսը դարեր շարունակ իրենց իմաստն են ստացել կլիմայի, աշխարհագրական պայմանների և տարբեր գործոնների ազդեցությամբ:

Բերենք մեկ այլ օրինակ, որտեղ խոսողների հաղորդակցական իրազեկության տիրապետման համար կկարևորվեն հենքային գիտելիքները: Համեմատենք ուսուցչի կողմից արտաբերված երկու արտահայտություն.

*Andrew, come out to the front, please!*

*Andrew, come out to the board, please!*

Այս նախադասություններից յուրաքանչյուրն ունի հրամայական բնույթ: Առաջին դեպքում աշակերտը պետք է առաջ գնա և դեմքով շրջվի դեպի համադասարանցիները: Լսելով երկրորդ արտահայտությունը՝ նա պետք է գնա գրատախտակի մոտ և կատարի գրավոր որևէ առաջադրանք, ինչպես ընդունված է անգլիական դպրոցում: Մեր դպրոցներում այս երկու արտահայտություններին համապատասխանում են «Գնա՛ գրատախտակի մոտ» կամ



«Արի՛ գրատախտակի մոտ»: Ի դեպ, «Գնա՛ գրատախտակի մոտ» և «Come out to the blackboard» կարող են ունենալ վարքագծի հակազդման տարբեր նպատակներ: Այդ իսկ պատճառով նրանց նույնացումը ստեղծում է լեզվաերկրագիտական խոչընդոտներ:

Ինչպես ապացուցում են Վ.Վ. Ջելենսկայան և Ն.Ի. Ռեմիզովան, «բառապաշարի մշակութային-ազգային բովանդակությունը կարևոր դեր է խաղում կիրառական լեզվաբանության մեջ, հատկապես օտար լեզուների դասավանդման և ուսուցման պրակտիկայում»:

Ուստի, հանրակրթական դպրոցներում հենքային գիտելիքի ուսուցումը պետք է կազմակերպվի ուսուցման դեռևս նախնական փուլում, երբ աշակետներին փորձում ենք ծանոթացնել հաղորդակցական ամենատարրական արտահայտություններին: Օրինակ՝ շատ հաճախ աշակերտները խուճապի են մատնվում, երբ նրանք լսում են “How do you do?” արտահայտությունը: Նրանք անմիջապես կարծում են, որ իրենց հարց է ուղղված և փորձում են գտնել պատասխանը՝ այն նույնացնելով “How are you?” կամ “What are you doing?” հարցերի հետ: Սակայն իրականում այն հարց չէ, այլ անծանոթին բարևելու ձև, որի համապատասխան ազդակն է “How do you do?": Նմանատիպ հաղորդակցական իրավիճակների հաճախ կարելի է հանդիպել օտար լեզուներ ուսումնասիրելիս:

Ժամանակակից աշխարհում վերոնշյալ հիմնախնդրի լուծման բազմաթիվ միջոցներ կան: Առաջարկում ենք

հանրակրթական դպրոցների ուսուցիչներին պարբերաբար օգտվեն հեռահաղորդակցման միջոցներից: Դասերի ընթացում տեսանյութերի, ֆիլմերի, մուլտֆիլմերի դիտումը և դրանց թարգմանությունները անշուշտ կնպաստեն հենքային գիտելիքների ձեռքբերմանը: Ներկայում արդիական է նաև օտարալեզու հասակակիցների և մասնագետների օնլայն շփումը դասապրոցեսի ընթացքում, որը նունյաես խթան է բանավոր խոսքի զարգացման:

Հետևաբար, կարելի է գալ այն եզրահանգման, որ թարգմանության միջոցով հենքային գիտելիքի ուսուցումը բավականին բարդ գործընթաց է, որի համար պահանջվում է օտար լեզվի իմացության այնպիսի գործնական հմտություններ, որոնք թույլ կտան համապատասխան իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել և խուսափել լեզվական խոչընդոտներից:

### Գրականության ցանկ

1. Гришаева, Л.И. (2004) *Культура взаимопонимания и взаимопонимание культур*// Воронежский государственный университет. – Воронеж, 218 с.
2. Дворак, Е.В. (2006) *Педагогические условия становления социокультурной компетентности студентов технического.* - Иркутск, 196 с.
3. Зеленская, В.В. (1996) *Заемствование как путь познания действительности* / В. В. Зеленская, Н.И., Ремизова // Природа. Общество. Человек. Вестник Южно-

- Российского отделения Международной академии наук высшей школы, № 2 – 3. - С. 3 - 4.
4. Ляховицкий, М.В. (1981) *Методика преподавания иностранных языков*. Учеб. Пособие для фак. Вузов.-М.: Высш. Школа, 159 с.
  5. Тер- Минасова, С. Г. (2000) *Язык и межкультурная коммуникация*. М.: Слово, 624 с.
  6. Щукин, А.Н. (1984) *Методика краткосрочного обучения русскому языку как иностранному*. — М.: Рус. яз., 126 с.
  7. Biemans, H.J.A & Simons, P.R. (1996) Contact-2: *A computer-Assisted Instructional Strategy for Promoting Conceptual Change*. *Instructional Science*, 24, pp. 157-176.
  8. Gudykunst, W.B., Kim, Y.Y. (1989) *Communicating with Strangers: An Approach to Intercultural Communication, in Bridges Not Walls*, ed. John Stewart, 6th edition, New York: McGraw-Hill, pp. 429-442.
  9. Haslett, B. (1987) *Communication, Strategic Action on Context*. Hillsdale; N. J.: Lawrence Erlbaum Associates, Publishers, 287 p.
  10. Stevens, K.C. (1980) *The Effect of Background Knowledge on the Reading Comprehension of Ninth Graders*. *Journal of Reading Behavior*, 12(2), 151-154.
  11. <http://englishon-line.ru/leksika-spravochnik17.html> Дом и сад на английском языке.
  12. <http://rudocs.exdat.com/docs/index-144720.html> Лингвистический аспект лингвострановедения.

***NELLY NALBANDYAN - Translation as an Important Component of Teaching Background Knowledge – The term “translation” doesn’t necessarily imply to the translation of one word, but the exact reproduction of word combinations and expressions. The knowledge of various structures of the languages is also of great importance. The main goal of the article is to present the peculiarities of the background knowledge. The primary focus should be on the role of translation, which contributes to teaching the background knowledge.***

***Key words:** background knowledge, intercultural communication, foreign language culture, communicative process, equivalent, effective communication.*

***НАЛБАНДЯН НЕЛЛИ - Перевод - как важнейший компонент обучения фонового знания - Цель данной статьи - представить особенности фоновых знаний в процессе обучения иностранному языку. Перевод текста значительно способствует продуктивности обучения. С другой стороны, фоновые знания необходимы в процессе перевода для достижения эквивалентности.***

***Ключевые слова:** фоновые знания, межкультурная коммуникация, иноязычная культура, процесс коммуникации, эквивалент, эффективная коммуникация.*